

հետեւեալ քանի մը տողերը բաւական պիտի ըլլան գաղափար մը կազմելու: Գրողը Վեգգիմ է, Գարիբալդի բարեկամն ու թիկնապահը. «Նա (Այվազովսկի) ոգեւորուած մեր երկնքին ու ծովին հիանալի գոյներովը՝ իր վրձինի իւրաքանչիւր շարժումին մէջ կը մերկացնէ իր սքանչացումն ու յայտնաբերումը: Լուսնոյ լոյսին խաղը, որուն մէջ նա ուզեր է նկարել Նէպոլիոնը գիշեր ժամանակ՝ լի՝ է ճշմարտութեամբ ու փայլով, եւ այնպիսի հիացմունք կը պատճառէ, որ դիտողը յաիշտակուած գոյներու կախարչական փոփոխութիւններէն՝ ցերեկուան մէջ կը փոխադրուի գիշերը, տեսնելով թէ ինչպէս լուսինը կը լուսաւորէ հորիզոնը: Այվազովսկին միայն ա՛յն ատեն կը նկարէ՝ երբ գիշերը կը մղէ այդ բանին իր կրակոտ երեւակայութիւնը, երբ իր մտքին մէջ, որպէս երազի, պատկերի ամբողջութիւնը կը պատկերանայ. ահա ա՛յն ժամանակ նա գոյները կը փոխադրէ կտաւի վրայ, եւ նկարը պատրաստ է⁴»:

1842 թուականին՝ նկարիչը վերստին երեւցաւ Վենետիկ, եւ հոն նկարահանողէսի գրաւորանոր պատտաններ: Այս առիթով տեղական լրագիր մը չվարանցաւ զինքն առնուանել «Հանձար», ուրիշներ՝ «Կախարդը ջրոյ եւ մթնոլորտի»: Իր «Նէպոլիոնոյ փարոսը» նուիրեց Վենետիկի Միլիթարեան Միւսթանութեան:

Նկարահանողէսը երբեք այսքան ոգեւորիչ չէր եղած այնտեղ. չնայելով որ վարպետի գործերն այնքան թանկ էին՝ հարուստներ ու ազնուականներ իրար հետ մրցելով զնեցին անոր նկարները: Ահա՛ նկարադրութիւն մը այս ցուցահանողէսի մասին. «Վենետիկի գրատունը ցուցադրուած նկարները հա՛րկ եղաւ որ տէրութիւնը զինուորներով պաշտպանէ, ա՛յնչափ խուռն բաղձութիւն տեսնելու կը վազէր⁵»:

Նկարիչն այլեւս ծանօթ գարձած Իտալիայի մէջ՝ սիրտը լի գոհունակութեամբ եւ կուրծքը կրկին ոսկեվառ միտալներով ուղեւեցաւ դէպի Գաղղիա, ուր անոր համբաւն իրմէ յառաջ էր հասած արդէն: Ուղեւորութիւնը հաճոյք մըն էր իրեն, վասն զի նախ կը հաւատար նկարիչը, թէ անիկա լաւագոյն միջոցն էր իր հոգեկին սահմաններն ընդլայ-

⁴ Մշակ, անդ:
⁵ Մատեայ Ալեանի, 1857, հատ. Գ, էջ 277:

նելու եւ օր մը հասնելու համաշխարհային արուեստագէտի արժէքին, եւ երկրորդ՝ իր ստեղծագործ երեւակայութեան նորանոր յորինանիւթեր կը հայթայթէր, եւ աւելի՛ կը բեղմնաւորէր իր յղացումներուն պատկերներն ու գոյները:

Այվազովսկին ժամանակակից արուեստագէտներուն ամէնէն բախտաւորը՝ իր նուաճումներուն սահմանը չէր ուզեր տեսնել. աւիկա կոյր փառասիրութիւն մը չէր որուն հետ առհասարակ փոքրողութիւնը կը համընթանայ. այլ ներքին, իր հանձարի խորքէն ժայթքող մղում մը, որ խելագէտ անսահման էր: Ու հանձարն հա՛րկ էր նուաճել ամբողջ աշխարհը վրձինով, ինչպէս Աղեքսանդր Մեծն ու Նապոլիոն դայն կրցան իրենց անկրանալի սուրով:

Զ.

ԴԵՊԻ ԳԱՂՂԻԱ ԵՒ ՀԱՐԵԻԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ

Իտալիոյ մէջ փառաւորուած ծովանկարիչը՝ մեծ ընդունելութեան արժանացաւ նաեւ Գաղղիայի մէջ: Նոյն ատեն Լուվրի պատկերահանողէսը բացուած ըլլալով՝ Այվազովսկի իր մասնակցութիւնը բերաւ, անձամբ հոն տեղաւորել տալով իր ծովանկարները, որոնց մէջ՝ լուսաւորութեան, բեկրեկումի, ցոլքի, ստուերներու, ջուրի խաղերուն, եւ ամպերեւոյթի ինքնայատուկ եւ առինքնող բան մը գրած էր ան, որուն համար նկարչին յաճախ արուեստագաւ «Կախարդը ջրոյ եւ մթնոլորտի» արտադրը:

Ժամանակի Գաղղիական թերթերը լի են վարպետ-ծովանկարչին սքանչացումով: Ահա՛ թէ ինչքան ոգեւորած էր նա Գաղղիայի ժողովուրդը. «Հազարաւոր մարդիկ կու գան խոնիլ անոր պատկերներուն առաջ»: Հոս ալ Այվազովսկին Գաղղիական «Ինստիտուտի» կողմէ հանդիսապէս պատուեցաւ երրորդ կարգի ոսկեմետալով:

Պարիսի ուսական Դեսպան Կոմս Կիսեւի՛ օրն ի բուն ականատես Այվազովսկի շոյելուած փառքին ու ժողովուրդի խանդավառութեան՝ ինքը չէր կարող չհամակուել հիացմունքով եւ տիրող ընդհանուր ոգեւորութեամբ:

Այվազովսկին հիւրասիրելով՝ անոր հոգեկին արժանի իր հիացումն ու յարգանքը մատուց, իբր հանձարեղ հայրենակցի մը, ու պատուեց զայն փառաւոր ճաշով:

Սակայն Այվազովսկի իր պատկերահանողէսներուն համար ընդարձակագոյն ծրագիր մը կազմած ըլլալով՝ Լոնտոն ուղեւորեցաւ: Նկարիչն իր հետն էր առած բաւական թիւով Անգլիան զգաց որ ժողովուրդը մէջ տարօրինակ յափշտակութիւն մը կայ հանդէպ նկարչի գործերուն: Այվազովսկի հո՛ս ալ արժանացաւ մեծամեծներու, արուեստագէտներու բարձր գնահատանքին: Չմեռնային ցուրտի մեղմանալուն՝ զարնանամուտի առաջին օրեւրուն, նա ողջունեց Սկանդինավեան թերակղզին: Նկարահանողէսներ տուաւ Լիւսաբոնի եւ Մադրիդի մէջ, յետոյ ճամբայ ելաւ դէպի Ռուսաստան: Ամառը արտաւազաւ չզրկուեցաւ անոր հրաշագործութիւններուն տեսքէն, ու հոն՝ Վիլիելմ Բագաւորը գնեց քանի մը ծովանկարներ, եւ հոլլանդացի Ակադեմիան զինքն ընտրեց Պատուոյ անդամ:

Ռուսաստան վերադարձը 1844ին, Այվազովսկիի համար նորանոր դարձումներով իր ճակատը պսակելու պատե՛հ առիթ մ'ընծայեց: Պետերբուրգի ամբողջ ժողովուրդն ընդատաջ գնաց նկարչին, ուսանաններով ու կայթիւղանոց հանդէսներուն մասին քաջ տեղեակ՝ ցուցահանողէսներուն մասին քաջ տեղեակ՝ Այվազովսկին պատուեց «Ակադեմիկոս» պատուանունը տալով իրեն: Անձամբ տեսակցուեց իր թիւն ունեցաւ Կայսրը եւ չնորհաւորեց իր համաշխարհային նուաճումներն ու հոգեկան կարգ նաւահանդիստներուն զեղեցկութիւնը նկարէ: Հիւսիսային երկիրներու վերադարձութիւնն ու նաւահանդիստներու վերադարձութիւնները նա կը սիրէր միայն ձմեռ ժամանակ: Կայսեր պատուէրը կատարելու համար՝ նա ձմեռ մ'ամբողջ զբաղեցաւ վրձինի աշխատութեամբ:

Որքան ալ արուեստագէտի սիրտը աւելի՛ հարաւային երկիրներու կապուած էր՝ սակայն նա հիւսիսային ծովեզերեայ տեսարաններէն ալ շատ բան նկարեց, թէեւ ոչ այնքան եռանդով: Նիկողայոս Ա. կայսրը նկարչին գործի գանդաղութիւնը տեսնելով՝ օր մ'ըսաւ անոր. «Դու կը ծուլանաս, այդ տեղ գու ձեռքերդ ծալած կը նստես»: Ու երբ նկարիչը պատասխանեց թէ հարաւն իր աշխատասիրութիւնը չի թուլացներ՝ կայսրը ժպտեցաւ:

Եւ յարեց իսկոյն. «Ո՛ւր կ'ուզես սարէ, միայն նկարէ եւ մի ծուլանար»:

Ինքնակալի համակրութիւնը դէպի Այվազովսկի շատ մեծ էր եւ անկեղծ: Նա ամբողջ սրտով արուեստաւորի անդրազոյն զարգացման համար միջոցներ կը խորհէր, եւ հրամայած էր նոյն իսկ՝ որ ծովային վարչութիւնը նկարչին ամէն յարմարութիւն ու ձեռնտուութիւն չնորհէ:

Մարտանաւի կոկորդ ներկայացնող նկարի մը համար Այվազովսկի կ'ուզէր տեսնել թէ ինչպէս թնդանօթի ոտմբը ծովի արիւններն ակօսելով կը սուրայ վառօղի ծուխերուն մէջ: Կայսր հրամայեց, որ կրօնշտապտի մէջ նկարչի ներկայութեան քանի մ'անգամ թնդանօթ արձակեն. իսկ նաւամարտի ներկայ ընելու համար՝ կայսրն առաջարկեց անոր Փինական ծոցի մէջ կատարելիք նաւատորմի զինուորական խաղերուն ականատես ըլլալ: Նկարիչը մեծ ուրախութեամբ ընդունեցաւ Կայսր առաջարկը, ու մեկնեցաւ մարտանաւերու չուին հետ: Փինական ծոցի մէջ նա տեսաւ ինչ որ կը փափաքէր տեսնել. նաւերու փախուստը ջրերու լայն ակօսներով, ոտմբի փայթիւնները, թնդանօթի անհրաժեշտ ու պայթիւնները, թնդանօթի արձակումը, նաւատորմը կատարեցնող արձակումը, նաւատորմի ճեղքման ճեղքման թշնամի մարտանաւերու ետեւէն եւն:

Այս բոլորը թէեւ փորձ էին՝ սակայն նկարչին համար իրական տուեալներ: Ու նա չ'ուշացաւ այդտեղէն քանի մը նաւամարտային տեսարաններ ուղարկել վեհափառ Կայսրին: Ինքնակալը կ'առնէր նկարները, եւ կը քննադատէր. մասնացոյց կ'ընէր յաջող եւ անբնական կէտերը:

Այսպիսի դիտողութիւններ նկարիչ վարպետի համար թէեւ ոչ ամէն անգամ՝ բայց երբեմն յառաջ կը բերէր զինութեան մէջ ակօսելի յատակատեսութիւն, դոյներու բաղաւթեան ու առարկաներու հեռաւորութեան մէջ աւելի ճշգրտութիւն ու բնականութիւն: Սակայն արուեստագէտի կատարելագործուող հասունութիւնը կրնանք ըսել, որ իր գաղափարակէտին էր հասած ա՛յն ատեն արդէն՝ երբ նա ինքնավստահօրէն Իտալիոյ եւ Գաղղիոյ պէս դժուարահաճ երկիրներու մէջ իր ժամանակակից արուեստագէտներու մէջ յառաջ բերած խանդավառ համակրութիւն ու մեծ գնահատանք:

